



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՔՐԵՏԵՆՔԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՒՅ 4-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ՝

ԳՈՒՐԳՈՒՐԱԼ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՆ ՈՒ ՉԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՍՆԵՆ

ԸՍՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆԸ

Պետք է զգուշութեամբ, գուրգուրանքով ու յատուկ հոգածութեամբ վարուիլ մանուկներուն հետ. ուշադիր պետք է ըլլալ, որպէսզի զանոնք զվրդովէք. մանուկները հրեշտակներ են ու իբրեւ այդպիսին, զԱստուած կը տեսնեն դրախտին մէջ, պատգամեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կիրակի, 26 Յուլիսին, Քրեւենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, յընթացս Ս. Պատարագի իր արտասանած քարոզին պահուն:

Առաջնորդ Սրբազանը Կիրակի յետմիջօրեին Ս. Պատարագ մատուցեց Քրեւենթա Հովիտի մեր Եկեղեցւոյ մէջ, ծխական համայնքի հաստատման 4րդ տարեդարձին առիթով: Իր քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ նաեւ աստուածաշնչական այն առակին, ուր Աստուածորդին կը նկարագրէ Բարի Հովիւին արարքը: Ան նշեց, որ Երկնաւոր Հօր համար, իւրաքանչիւր մարդ արարած կարելոր է, անոր փրկութիւնն ու աստուածահաճոյ կեանք վարելը ազնիւ պահանջ է, սակայն Աստուծոյ համար աւելի կարելոր է մոլորեալին ուղիղ ճամբու դարձը: Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ բարի հովիւը իր մոլորեալ ու կորսուած մէկ ոչխարին համար բազում վտանգներ դիմագրաւեց, հօտին մէջ գտնուող 99 ոչխարները դաշտը ձգելով, հետամուտ եղաւ կորսուած մէկ ոչխարին, վերագտաւ զայն ու վերադարձուց հօտին: Մոլորածն ու վերագտնուածը մեծ ուրախութիւն պատճառեց հովիւին, որ կը խորհրդանշէ Երկնաւոր Հայրը:

Առաջնորդ Սրբազանը նաեւ ողջունեց Քրեւենթա Հովիտի ծխական համայնքը, որուն կազմութեան չորրորդ տարեդարձն էր. ան գնահատանքով արտայայտուեցաւ հոգեւոր մատակարարին՝ Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեանի, Ազգային Երեսփոխաններուն, հոգաբարձութեան, դպրաց դասին, տիկնանց միութեան ու ծխական շրջանին ծառայողներուն աշխատանքին մասին, մաղթելով, որ շրջանը իրականութեան հասցնէ սեփական Եկեղեցի ունենալու իր երազը:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ կից սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ սեղան:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY CHURCH ON THE FOURTH ANNIVERSARY OF THE PARISH

On the afternoon of Sunday, July 26th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at the Armenian Apostolic Church of Crescenta Valley on the fourth anniversary of the establishment of the parish. The Prelate was assisted at the altar by parish pastor Rev. Fr. Ardak Demirjian.

The Prelate's sermon centered on the parable of the Good Shepherd which shows how our Shepherd, our Lord Jesus Christ, came into this world to die for the sins of His lost people in order that they might be saved, and that He will seek us when we stray from Him.

The Prelate also commended the parish pastor, delegates, Board of Trustees, Ladies Auxiliary, and deacons and altar servers for their commitment to the growth of the parish over the past four years and expressed his wish that the parish have its own church in the near future.

A reception in the adjoining hall followed after services.